Առաջարկ

«Քրեական վարույթներով իրավական օգնության մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել է **«Քրեական վարույթներով իրավական օգնության» մասին ՀՀ օրենքի նախագիծ**, որի վերաբերյալ առկա են հետևյալ նկատառումները.

Բովանդակային առումով նախագիծն ամրագրել է ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված, ինչպես նաև ՀՀ վավերացրած միջազգային պայմանագրերի բացակայության դեպքում քրեական վարույթներով իրավական օգնության իրականացման կարգն ու պայմանները և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով՝ քրեական վարույթներով իրավական օգնության վերաբերյալ կարգավորում չստացած հարաբերությունները:

Ներկայացված նախագիծը կանոնակարգում է նաև իրավական օգնության հարցումների շրջանակներում ընդգրկվող տեղեկատվության տեսակներն ու ծավալը, ինչպես նաև հարցմանը ներկայացվող պահանջները: Մասնավորապես՝ նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 6-րդ հոդվածի համաձայն՝ հայցվող տեղեկատվության շրջանակներն ընդգրկում են նաև **հանցավոր ճանապարհով ստացված կամ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի, հանցագործության կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների և միջոցների, դրանց բացակայության դեպքում համարժեք գույքի արգելադրումը, բռնագանձված գույքի բաշխումը**: Սակայն ի տարբերություն նախագծում հարցման շրջանակներում ընդգրկված տեղեկատվության այլ տեսակների դետալային նկարագրության, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի վերաբերյալ հարցումներին ներկայացվող պահանջները չեն հստակեցվում:

Հարկ է նշել, որ նշված տեղեկատվությունն ըստ էության առնչվում է նաև ֆինանսական համակարգերի և ապօրինի տարանցումների եղանակով ՀՀ-ից փոխադրված և շարժական ու անշարժ գույքի կարգավիճակով այլ պետություններում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքերին՝ ՀՀ-ում ապօրնի ծագում ունեցող գույքի բռնագանձման իրավական գործընթացների շրջանակում: «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին ՀՀ օրենքի 5-րդ գլուխն իր հերթին նախատեսում է միջազգային համագործակցության կարգը, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթների ճնշող մեծամասնությունը նույն օրենքի 5-րդ հոդվածի համաձայն սկսվում է քրեական վարույթներում առկա տվյալների հիման վրա, անհրաժեշտ է առաջարկվող նախագծում հստակեցնել քրեական վարույթներով իրավական օգնության շրջանակներում հանցավոր ճանապարհով ձեռք բերված կամ ըստ էության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցումներին ներկայացվող պահանջները: Առաջարկվող կարգավորումը հնարավորություն կընձեռի քրեական վարույթների շրջանակներում իրականացնել լիարժեք, ամբողջական բովանդակությամբ իրավական օգնության հարցումներ՝ խնայելով ռեսուրսներ և ժամանակ, ինչն անչափ կարևոր է ապօրինի ակտիվների բռնագանձման գործընթացի օպերատիվ կազմակերպման և իրականացման համար:

Առաջարկ.

- Հստակեցնել իրավական օգնության շրջանակներում հարցմամբ գույքի ծագման, դրա իդենտիֆիկացիայի, գնահատման, արգելադրման հիմքերի, ենթադրյալ բարեխիղճ ձեռքբերողների, գույքի բռնագանձումից հետո դրա՝ օտարերկրյա պետությունում կառավարման, օտարման պայմանների հարցերը: Նշված կարգավորումները կհստակեցնեն

քրեական վարույթներով հանցավոր ծագում (քաղաքացիաիրավական գնահատմամբ՝ ապօրինի ծագում) ունեցող գույքի բռնագանձման իրավական պայմանները՝ միջազգային պայմանագրերին համապատասխան,

- նախագծում ամրագրել, որ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի վերաբերյալ իրավական օգնության հարցման դեպքում ՀՀ դատախազության՝ մինչդատական վարույթի նկատմամբ հսկողություն իրականացնող համապատասխան ստորաբաժանումը պարտավոր է այդ մասին տեղեկացնել ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարչությանը՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցով ուսումնասիրություն սկսելու հարցի քննարկման նպատակով: